

**ԺԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՈՉ ԲԱՑԱՀԱՅՏ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից լեզվաբանության ընդհանուր ուղղվածությունը դեպի լեզվի հաղորդակցական-միտումնային հայեցակետը շարունակում է գրավել մեծ թվով լեզվաբանների ուշադրությունը, որոնք իրենց հետազոտություններում անդրադառնում են հաղորդակցության մասնակիցների խոսքային վարքի, խոսքային հաղորդակցության հոգեբանական, սոցիալական պայմանների ուսումնասիրությանը: Նմանօրինակ մոտեցումը պահանջում է, որ ուսումնասիրության կիզակետում դրվեն այն պայմանները, որոնցում տեղի է ունենում հաղորդակցությունը, բացահայտվեն մասնակիցների նպատակներն ու երկխոսության շարժառիթները, ինչպես նաև լեզվական այն միջոցները, որոնց շնորհիվ իրականացվում են վերջիններիս հաղորդակցական միտումները:

Երկխոսություններում ժխտման քերականական կարգի արտահայտության միջոցների ուսումնասիրությունն ամմիջակառոբեն առնչվում է այս խնդիրներին: Երկխոսության ընտրությունը պայմանավորված է այն համգամաքոդ, որ այն ավելի կենդանի է, շարժում ու բնական, դրա միջոցոդ արտահայտվում են խոսողի հույգերը, մտադրությունները, հետաքրքրությունները՝ առավել հետաքրքրական դարձնելով վերջինիս վերլուծությունը:

Երկխոսությունների ավանդական ուսումնասիրության հիմքում ընկած է երկխոսական միասնություն հասկացությունը, որի իմաստային բովանդակությունը բազմազան է: Առավել հաճախ այն արտահայտում է հարց ու պատասխան, սակայն կարող է բացահայտել նաև կամքի տարբեր դրսւորումներ՝ առաջարկ, հրաման, խնդրանք, մերժում, ժխտում, հույգ, կասկած, մտավախություն, ինչպես նաև դրանց համդեպ արված հակադդումներ:

Երկխոսական միասնությունն իր հերթին բաղկացած է խթանիչ ռեպլիկի հետադարձ ռեպլիկից, որոնց միջև գոյություն ունեցող հարաբերություններն ապահովում են իմաստային, քերականական, գործաբանական, տրամաբանական և հնչերանգային գործոնները: Դրանցից քերականականն արտահայտվում է ռեպլիկների շարահյուսական հաջորդականության, նրանց անդամների գեղչվածության, կապի միջոցների և դերանունների կիրառման միջոցով: Երկու ռեպլիկների միջև բառային գործոնն արտահայտվում է անվան կրկնությամբ, հոմանիշների և հականիշների գործածությամբ: Հնչերանգային գործոնը հա-

տուկ է հարց-պատասխան ռեպլիկներին և ոչ բոլոր տիպի երկխոսություններում է դիտվում /1,152-157/: Ուսումնասիրված նյութը հնարավորություն է տալիս տարբերել ռեպլիկների հետևյալ տեսակները.

- 1) ռեպլիկներ, որոնց արտահայտած ներակա ժխտումն ուղղված է խոսակցին,
- 2) ռեպլիկներ, որոնց արտահայտած ներակա ժխտումն ուղղված է խոսողին,
- 3) ռեպլիկներ, որոնց արտահայտած ներակա ժխտումն ուղղված է ոչ խոսողին և ոչ խոսակցին:

Օրի՝ Sainte - Thérèse.- Mme, je ne m'ennuie pas.

La supérieure.- C'est que j'ai mille choses à demander à cette enfant.

Sainte-Thérèse.- Je le crois.

La supérieure.- Je veux savoir toute son histoire, comment réparerai-je les peines qu'on lui a faites, si je les ignore? /D. D, 192/

Այս երկխոսության մեջ խոսակցին՝ Թերեզին ուղղված իր ռեպլիկի միջոցով խոսողը՝ մայրապետը, ցանկանում է տեղեկացնել, որ ինքը պարզապես նպատակ ունի օգնել Այուզանին, սակայն չի կարողանում, քանի որ տեղյակ չէ նրա տագնապների մասին:

Հետևյալ օրինակում խոսակիցը՝ Բասինեն, իր հաստատական ռեպլիկի միջոցով, որն ուղղված է խոսողին՝ տիկին Էդրեվիլին, ցանկանում է տեղեկացնել, որ չի պատրաստվում քնել և իր վրդովմունքն է հայտնում ներակայորեն: Mme Aigreville.- Oui...oui...allez! allez!... allez vous coucher!...

Bassinot.- Comment! que j'aille me coucher? /G. F. 28/.

Իսկ այս նախադասությունում հաստատական ռեպլիկի միջոցով արտահայտված ժխտումն ուղղված է ոչ խոսակցին և ոչ խոսողին. Etre fidèle à la vertu, martyre sublime! Bah! Tout le monde croit à la vertu, mais qui est vertueux? /H. B. 160/: Այս դեպքում իր հարցական ռեպլիկի միջոցով արտահայտված ներակա ժխտմանը Բալզակը ընդհանրական բնույթ է հաղորդել և նպատակ ունի ցույց տալ, որ աշխարհում ոչ ոք բարեգութ չէ:

Ժամանակակից ֆրանսերենի երկխոսություններին հատուկ են ժխտման արտահայտության բացահայտ /explicite/ և ոչ բացահայտ /implicite/ հետևյալ միջոցները.

1) ժխտման արտահայտության հիմնական բացահայտ միջոցներն են ժխտական նախադասությունները, որոնք պարունակում են ժխտական ne և pas, jamais և այլ մակբայները, sans նախդիրը, rien, personne և այլ դերանունները, aucun առկայացուցիչը, ինչպես նաև ժխտման արտահայտության բառակազմական միջոց հանդիսացող à-, dé-, dés-, in-, im- և այլ նախածանցները.

Mme Rico.- Tu ne pars pas tout de suite?

Eddie.- Pas tout de suite, non. /G. S. 171/

Aubin.- Eh! Bien, oui. Qu'est ce qui vous arrête?

Moulineaux.- Moi? Ah! Rien du tout! /G. F. 77/.

Ժխտման արտահայտության ոչ բացահայտ միջոցների ուսումնասիրությանն առաջին անգամ անդրադարձել Օ. Եսպերսենը՝ առաջարկելով «ենթադրվող ժխտում» արտահայտությունը /2,404/: Սակայն նրա այս տեսակետը դուրս է մնացել իր ժամանակակիցների ուշադրությունից:

Ժխտման արտահայտության «ոչ բացահայտ» միջոցներ տերմինն առաջին անգամ հանդիպում ենք Յու. Մ. Սկրեբնկի աշխատություններում /3, 227-232/: Այդ միջոցները, ըստ նրա, այնպիսի շարահյուսական կառույցներ են, որոնք օգտագործվում են իրենց ոչ հատուկ վերաիմաստավորված նշանակությամբ, սակայն դրանք չեն ուսումնասիրվել որպես համակարգ:

Ժխտման արտահայտության ոչ բացահայտ միջոցներ են հանդիսանում հաստատական մախադասությունները, որոնցում ժխտումն արտահայտվում է. a) համապատասխան անդամի՝ իր հակամիշով փոխարինմամբ: Օր՝ Je l'ignore (= je ne le sais pas), manquer (=ne pas avoir ou ne pas être-il manque ici-նա բացակայում է). b) բառերի փոխաբերական իմաստով գործածությամբ: Օր՝ C'est du joli=(ce n'est pas bien, c'est du propre). c) պայմանական (ենթադրական) կառույցների գործածությամբ: Օր՝ Si j'étais jeune=je ne suis pas jeune. Si jeunesse savait et vieillesse pouvait. d) հարցական կառույցների գործածությամբ: Օր՝ Qui le sait?=personne ne le sait. e) սպասարկու բառերով՝ non, pas, sans.նր՝ il est sans parapluie=il n'a pas son parapluie. f) շարահյուսական կառույցներով, որոնք գործածվում են որպես հատուկ բառային դարձվածներ. Je suis loin de vous croire=je ne vous crois pas /4, 651-655/.

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից ֆրանսերենի երկխոսություններում ժխտման արտահայտության ոչ բացահայտ միջոցներից հատկապես կեղծ հարցական մախադասությունները:

Տեղեկատվություն չպահանջող հարցական մախադասություններ կիրառելու դեպքում մենք գործ ունենք գործառական փոխակերպման գործընթացի հետ, որն ուղեկցվում է իմաստի վերաիմաստավորմամբ և որի հետևանքով առաջանում է անհամապատասխանություն մի կողմից ավանդական նշանակչի և դիրքային նշանակյալի միջև, մյուս կողմից նշանակչի և նշանակյալի միջև: Նմանօրինակ մախադասությունների համար հատկանշական է իմաստի կայուն տեղաշարժ՝ անտեղյակություն ենթադրող հարցից դեպի

ներակա ժխտական պատասխան: Այս պարագայում նախադասության բայն ունենում է հաստատական ձև:

Օր՝ Bernard.- Dites, Monsieur ! C'est pas parce que vous êtes de l' e'tablissement qu'il faut vous croire permis de m' insulter.

Jeune homme.- Vous **insulter!** Loin de moi cette pensée. /E. E14/

Այս կարգի նախադասությունների հիմքում ընկած է կանխենթադրությունը, ինչը խոսողի նախնական գիտելիքների, պատկերացումների ամբողջությունն է և հնարավոր է դարձնում տվյալ ասույթն ու դրա ընթրնումը: Օր՝

Lauren.- Vous en voyez un autre?

Arthure.- Un autre quoi?

Lauren.- Un autre moyen, parce que dites- moi que vous allez pouvoir trouver le sommeil.

Arthure.- **Mais qu' est-ce que j' ai fait au Bon Dieu pour que cela m' arrive à moi?.** /M.L.45/

Այս երկխոսության պարունակած ժխտումը հասկանալի է դառնում շնորհիվ նրանում առկա կանխենթադրության, որն ընդգրկում է խոսողի միտումները, հույզերն ու անհամգստությունները տվյալ խնդրի վերաբերյալ:

Կանխենթադրություն հասկացությունը բավականին հեռու է նախադասությունների ընդունված մեկնաբանությունից և դա ունի իր պատճառները, որոնք են. **ա)** կանխենթադրություն պարունակող ձևով հարցական, բովանդակությամբ ժխտական նախադասությունները: Հարցական ձևն ընդունելի չէ նախադասությունների տրամաբանությունում այն պատճառով, որ հարցական նախադասությունը ճշմարիտ չէ:

Օր՝ Arthure.- Tout est aussi prêt que possible, dit-il.

Lauren.- Encore une fois, pourquoi fais-tu tout cela?

Arthure.- Réussir à te ramener au monde donne un sens à ma vie. **Combien de fois ma vie m'offrira-t-elle de faire une chose essentielle?** /M. L. 128/.

Այս օրինակում Արթուրի պատասխան ռեպլիկի դրդապատճառը Լորանի հարցական նախադասության բովանդակությունն է. կանխենթադրությունը ստորակարգվում է այդ նախադասությանը, սակայն դուրս չի գալիս դրա սահմաններից. այսինքն կանխենթադրությունները նպաստում են նախադասությունների իմաստային մեկնաբանությանը:

բ) Կանխենթադրությունները պետք է կարողանան ժխտվել խոսակցի կողմից: Օր՝ Margot.- Tu dis que Maxime aime Solange?

Pascal.- **Je dis que Maxime couche avec Solange, voilà tout ce que je dis.** /J.C. 193/

Մարգոյի հարցին Պասկալի պատասխան ռեպլիկը կարելի է ընկալել.

1) Մաքսիմը չի սիրում Սոլանմին, բայց նրա հետ որոշակի հարաբերություններ ունի, 2) Մաքսիմը սիրում է Սոլանմին և միևնույն ժամանակ նրա հետ որոշակի

սիրային հարաբերություններ ունի: Առաջին դեպքում Մարգոյի սպասումը բավարարված է, այսինքն Պասկալը նույնպես կարծում է, որ Մաքսիմը սիրում է Սոլանժին, իսկ երկրորդ դեպքում կանխենթադրությունը ժխտվում է, Մարգոյի սպասումը բավարարված չէ, այսինքն Պասկալը կարծում է, որ Մաքսիմը սիրում է Սոլանժին: Այս դեպքում նախադասությունը ճշմարիտ է:

с) եվ վերջապես, ենթադրական նախադասությունները և կամ *il est possible que*-ի միջոցով կազմված նախադասությունները, որոնք ծերբազատված են ճշմարիտ/կեղծ երկարժույթ հակադրությունից, այսուհանդերձ հիմնված են կանխենթադրության վրա: Օր՝ *Il est possible que Pierre ignore que Marie est partie* " *si Pierre ignore que Marie est partie, il est mal renseigné* նախադասությունները կանխենթադրում են, որ Մարին մեկնել է, չնայած, որ երկու դեպքում էլ Պիերն այդ մասին չգիտի: Այս երկու նախադասություններն էլ ճշմարիտ չեն, քանի որ դիտարկվում են միայն որպես հնարավոր:

Այժմ ուսումնասիրենք այնպիսի նախադասություններ, որոնք պարունակում են ընդհանուր, մասնակի և կամ լեզվական կանխենթադրություններ.

а) ընդհանուր կանխենթադրությունը ներառում է մարդկանց ընդհանրական գիտելիքները արտաքին աշխարհի վերաբերյալ: Օր՝

Yvonne.- *Quoi! Non!... Oui!... Vous paraissez troublé.*

Etienne.- *Moi, troublé? Que madame regarde! Moi troublé! /G.F. 7/*

Զնայած, որ էթենի պատասխանում հնչած ժխտումը բացահայտ չէ, այն առկա է և ընկալվում է շնորհիվ ընդհանուր կանխենթադրության:

б) մասնակի կանխենթադրությունը ներառում է տեղեկություններ /փաստեր/, որոնք վերաբերում են կոնկրետ տվյալ իրավիճակին: Օր՝

Margot.- *Et tu t'imagines que son amour résistera au scandale. Pourquoi ne l'as-tu pas avoué tout? Tu avais peur de perdre ta place ?*

Maxime.- *J' avais peur de lui faire de la peine. /J. C. 230/*

Պատասխան ռեպլիկի ժխտական իմաստը, ինչպես նաև այն, թե ում մասին է խոսվում, ընկալվում են միայն շնորհիվ մասնակի կանխենթադրության (այսինքն Մաքսիմը չէր վախենում իր աշխատանքը կորցնել, այլ պարզապես չէր ցանկանում ցավ պատճառել Սոլանժին):

с) լեզվական կանխենթադրությունը ներառում է խոսակիցների լեզվական գիտելիքները: Օր՝

La supérieure.- *Si vous n'étiez point appelée, si vous étiez contrainte, que ne le disiez-vous quand il en était temps ?*

Suzanne.- *Et à quoi cela m'aurait-il servi? /D. D. 111/*

Այս օրինակում պատասխան ռեպլիկի ժխտական իմաստը, ինչպես նաև ամբողջ երկխոսության բուն իմաստն ընկալվում է շնորհիվ լեզվական կանխենթադրության: Կանխենթադրությունը ենթադրում է տարբերություն նախադասության բուն իմաստի, որը բխում է այն կազմող բառերից և լրացուցիչ իմաստի միջև, որը նա ձեռք է բերում տվյալ խոսքում: Այն կարող է լինել «հաջորդող» հիմնավորելով տվյալ ասույթը: Այսպիսի հավելյալ իմաստը ընդունված է անվանել պատճառական /2, 481-482/:

Օր՝ Mme Rico.- Tu ne manges plus ?

Eddie.- J'ai dîné avant de venir. /G. S. 62/

Այս դեպքում ասույթն ունենում է երկակի իմաստ. կանխենթադրվող և ռեալ հաղորդվող: Նշված օրինակում ասույթի կանխենթադրվող իմաստն այն է, որ եղին պետք է ևս ուտեր, իսկ ռեալ հաղորդվող իմաստը՝ որ նա չի ցանկանում այլևս ուտել: Կանխենթադրությունը կարող է լինել նաև «նախորդող»՝ կանխորոշելով այն ազդեցությունը, որը խոսողը ցանկանում է թողնել խոսակցի վրա: Նմանօրինակ հավելյալ իմաստը ընդունված է անվանել գործաբանական /2, 481-483/:

Օր՝ Pascal.- Ou` comptes-tu me mettre ? Derrière les robes ?

Margot.- On verrait tes pieds. **Rappelle-toi, j'ai une cachette magnifique.** /J. C. 239/:

Իր պատասխան ռեպլիկի միջոցով Մարգոն կարծես ցանկանում է ազդել Պասկալի վրա և համոզել, որ անհանգստանալու կարիք չկա, քանի որ ինքը հիանալի թաքստոց ունի՝ իր սնդուկը: Բերված բոլոր օրինակներում էլ խոսակցիցների պատասխան ռեպլիկների ժխտական իմաստը հասկացվում է շնորհիվ նրանցում առկա կանխենթադրության:

Ժխտման հիմնամշանակային արժեք ունեցող կեղծ հարցերի շարքում կարելի է առանձնացնել այնպիսիք, որոնք, շնորհիվ իրենց հաճախակի գործածության և բաղադրիչների բառային սահմանափակության, վերածվել են խոսակցական լեզվի՝ ժխտական իմաստ պարունակող շարահյուսական կառույցների և ըստ նրանցում առկա հարցերի հանդես են գալիս երկու ձևով.

a) հարցական բառի հետ միասին կարող են կիրառվել այնպիսի գոյականներ, ինչպիսիք են. *le droit, l'affaire, le profit, la bonté, l'enfer, le diable, le destin, le besoin...* Օր՝ *Maulineaux. – Quel besoin aviez – vous de venir patauger?...*

Bassinot. – Hein! Quoi? /G. F. 15/

b) հարցական բառի հետ կիրառվում է *pouvoir* բայը: Օր. *Que puis – je ajouter à cette lettre? /H. B. 83/:* Երկխոսություններում ժխտման իմաստ ունեցող որոշ կեղծ հարցական նախադասություններ հանդիսանում են շարահյուսական կայուն արտահայտություններ և խոսքում վերարտադրվում են պատրաստի տեսքով: Այդ արտահայտություններն են. *Quelle en est la différence? Quel en est*

le profit ? Est-ce obligatoire ? Est-il nécessaire ? Pourquoi dois-je /tu/? Pourquoi s' inquier ? On

Lauren.- Arthure, tu comptes renoncer à toute ta vie pendant combien de temps ? Arthure.- C' est obligatoire d' avoir cette discussion maintenant? /M. L. 215/ Suzanne.- Mais si je ne trouve point un e'poux, est-il ne'cessaire que je m' enferme dans un couvent ?

Maman.- A moins que vous ne veuilliez perpe'tuer ma douleur et mes remords, jusqu' a' ce que j' aie les yeux fermés. /D. D. 61/

Ի տարբերություն բացահայտ ժխտական կառույցների՝ ոչ-բացահայտ նախադասությունների միջոցով արտահայտված ժխտումը հուզարտահայտչական երանգավորում ունի և սուբյեկտիվ բնույթ է կրում: Վերոհիշյալ նախադասությունների վերաիմաստավորումը որպես հուզարտահայտչական ժխտում՝ հատուկ հնչերանգային ձևավորմամբ, ապահովում է այդ կառույցների գործառությունը՝ որպես ժխտում արտահայտող միջոցներ: Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը. 1) Ֆրանսերենի երկխոսություններում լայն կիրառություն ունեն ոչ բացահայտ ժխտում արտահայտող կեղծ հարցական նախադասությունները: Դրանք այնպիսի նախադասություններ են, որոնք ըստ իրենց շարահյուսական կառուցվածքի հարցական են, սակայն իրականում արտահայտում են ժխտում: Այդ նախադասությունների ժխտական իմաստն ընկալվում է շնորհիվ նրանցում առկա կանխենթադրությունների: 2) Ռեպլիկները սուբյեկտիվ բնույթ են կրում. այսինքն իրադրության պահանջը, խոսողի հաղորդակցական մտադրությունները, դիտավորություններն ու ցանկությունները այն գործոններն են, որոնք պայմանավորում են հարց-պատասխան ռեպլիկներում ժխտման արտահայտության այս կամ այն միջոցի /բացահայտ, ոչ բացահայտ/ ընտրությունը:

1. Михайлов Л. М. „Коммуникативная грамматика немецкого языка“, М. Высшая школа, 1994, с.152-157.

2. Есперсен О. „Философия грамматики.. 1958, с.404.

3. Скребнев Ю. М. „ К проблеме универсальных свойств разговорного подъязыка,, 1972, с. 227-232.

4. Гак В. Г. „ Теоритическая грамматика французского языка,, , 2000, с. 651-655.

5. G. F.- Georges Feydeau Tailleur pour dames, Librairie théâtrale, Paris 1993

6. G. S.- Georges Simenon Les Frères Rico, Изд.- во Высшая школа, Москва, 1967

7. J. C.- Jean Cocteau La machine à écrire, Edition du Progrès, Moscou 1976

8. E. E.- Eric Eychenne Drugstore, Pierre Jean Oswald, 1971

9. M. L.- Marc Levi Et si c'était vrai, Robert Laffont, 2000

10. H. B.- H. de Balzac Modeste Mignon, Edition Gallimard et Librairie Générale Francaise, 1967

11. D. D.- Denis Didrot La religieuse. Edition du Progrès. Moscou, 1980